ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 14.11.2018թ. N 342/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.12.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Ստեփանյանը, Վ.Ալոյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**
***Աճուրդի ամփոփման արդյունքների մասին***

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Յուքոմ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Տերյան-19, բն.4)

**2.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

-«Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա է հրավերով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ որը կազմված է հրավերի պայմաններին համապատասխան:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Ծառայության անվանումը | Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | Պլանավորված առավելագույն գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| | | **«Յուքոմ» ՍՊԸ** | |
| 1 | Լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայություններ | 65 500 000 | **88 800 000** |

**4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**5. Հանձնաժողովը որոշեց՝**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց դիմում-հայտարարության՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը գնահատել բավարար:
2. «Յուքոմ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար հրավերով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
4. Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
5. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Գ.Ստեփանյան

Վ.Ալոյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան